



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 օգոստոսի 2022 թվականի թիվ 106-Ա

ք. Երևան

«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԿՀ N 328 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ընկերության 2022 թվականի հուլիսի 22-ի ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու և 2022 թվականի մարտի 29-ին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության ԿՀ N 328 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

Բավարարել «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ընկերության դիմումները՝

1. Տրամադրել «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա:

2. Ուժը կորցրած ճանաչել «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ընկերությանը 2022 թվականի մարտի 29-ին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության ԿՀ N 328 լիցենզիան:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

4. Մույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ